ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6 – 30-18

ք. Երևան «14» 03 2018թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա. Կարապետյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **տնօրեն Կ. Սուքիասյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1 995 150** (Մեկ միլիոն ինն հարյուր իննսունհինգ հազար հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (որը կսահմանվի սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող կնքվող համաձայնագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և այդ միջոցների շրջանակներում) (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված

մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև

համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013010013	Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 02505983	ՀՎՀՀ 00861057
_____ Ա.Կարապետյան	_____ Կ. Սուքիասյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«14» 03

ՀՀ ՏՀՇՆ-ԳՀԱՊՁԲ-18/6 – 30-18

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման			
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**	
5	30121500/339	Քարթրիջներ HP	Ճապոնիա Helwlett-Packard Europe B.V.	**HP 305A CE-411-A** օրիգինալ ստանդարտին համապատասխան, գույնը՝ կապույտ, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ:	հատ	60000	120000	2	Մ.Մկրտչյան 5	2		
6	30121500/340	Քարթրիջներ HP	Ճապոնի Helwlett-Packard Europe B.V.ա	**HP 305A CE-412-A,** օրիգինալ, ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ դեղին, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ:	հատ	60000	120000	2	Մ.Մկրտչյան 5	2		
7	30121500/341	Քարթրիջներ HP	Ճապոնիա Helwlett-Packard Europe B.V.	**HP 305A CE-413-A,** օրիգինալ ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ կարմիր, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ:	հատ	60000	120000	2	Մ.Մկրտչյան 5	2		
9	30121500/337	Քարթրիջներ HP	Ճապոնիա Helwlett-Packard Europe B.V.	**HP LJ Pro MFP M227 sdn 30A** օրիգինալ ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ:	հատ	34998	174990	5	Մ.Մկրտչյան 5	5		
11	30121500/334	Քարթրիջներ HP	Ճապոն Helwlett-Packard Europe B.V. իա	**Քարթրիջ HP 80X (CF280X)** Էյչ Փի 80էքս (Սիէֆ280էքս) **Основные характеристики** Հիմնական բնութագրերը **Производитель** Արտադրող **HP** Էյչ Փի	հատ	83300	499800	6	Կառավարական տուն 3	6		

				Модель Մոդել	**CF280X (№80X) (экономичный)** ՍիէՖ280էքս (№80էքս) (տնտեսող)							
				Тип оборудования Սարքի տեսակը	**Черный Картридж** Սև քարթրիջ							
				Описание Նկարագրությունը	**Оригинальный картридж HP** Բնօրինակ քարթրիջ էյչփի							
				Ресурс Ռեսուրս	6900 страниц 6900 էջ							
12	30121500/335	Քարթրիջ-ներ HP	Ճապոնիա Helwlett-Packard Europe B.V.	**Քարթրիջ CC530A (black), CC531A (cean), CC532A (yelow), CC533A(magenta)** ՍԻՍԻ530Էյ (սև), ՍԻՍԻ531Էյ (կապույտ), ՍԻՍԻ532Էյ (դեղին), ՍԻՍԻ533Էյ (կարմիր)		Լրա-կազմ	244980	489960	2	Կառա-վարա-կան տուն 3	2	
				Քարթրիջ CC530A ՍԻՍԻ530Էյ								
				Производитель Արտադրող	**HP** Էյչփի							
				Модель Մոդել	**CC530A (№304A)** ՍԻՍԻ530Էյ (№304 Էյ)							
				Тип оборудования Սարքի տեսակը	**Черный Картридж** Սև քարթրիջ							
				Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրնակ քարթրիջ էյչփի							
				Ресурс Ռեսուրս	**3500 страниц** 3500 էջ							
				Քարթրիջ CC531A ՍԻՍԻ531Էյ								
				Производитель Արտադրող	**HP** Էյչփի							

Модель Մոդել	**CC531A (№304A) (голубой)** ՍԻՍԻ531Է (№304 Է) (կապույտ)
Тип оборудования Սարքի տեսակը	**Голубой Картридж** Երկնագույն քարթրիջ
Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրնակ քարթրիջ էյչփի
Ресурс Ռեսուրս	**2800 страниц** 2800 էջ
Քարթրիջ CC532A ՍԻՍԻ532Է	
Производитель Արտադրող	**HP** Էյչփի
Модель Մոդել	**CC532A (№304A) (желтый)** ՍԻՍԻ532Է (№304 Է) (դեղին)
Тип оборудования Սարքի տեսակը	**Желтый Картридж** Դեղին քարթրիջ
Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրնակ քարթրիջ էյչփի
Ресурс Ռեսուրս	**2800 страниц** 2800 էջ
Քարթրիջ CC533A ՍԻՍԻ533Է	
Производитель Արտադրող	**HP** Էյչփի
Модель Մոդել	**CC533A (№304A) (пурпурный)** ՍԻՍԻ533Է (№304 Է) (կարմիր)
Тип оборудования	**Пурпурный Картридж**

				Սարքի տեսակը	Կարմիր քարթրիջ							
				Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրնակ քարթրիջ էյչփի							
				Ресурс Ռեսուրս	**2800 страниц** 2800 էջ							
13	30121500/330	Քարթրիջ-ներ HP	Ճապոնիա Helwlett-Packard Europe B.V.	**Քարթրիջ CF360X (black), CF361A (cean), CF362A (yelow), CF363A (magenta)** ՍԻԷֆ360էքս (սև), ՍԻԷֆ361էյ (կապույտ), ՍԻԷֆ362էյ (դեղին), ՍԻԷֆ363էյ (կարմիր)		Լրա-կազմ	470400	470400	1	Կառա-վարա-կան տուն 3	1	
				Քարթրիջ CF360X ՍԻԷֆ360Իքս								
				Производитель Արտադրող	**HP** էյչՓի							
				Модель Մոդել	**CF360X (№508X) (экономичный)** ՍԻԷֆ360 էքս (№305 էքս) (տնտեսող)							
				Тип оборудования Սարքի տեսակը	**Черный Картридж** Սև քարթրիջ							
				Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրնակ քարթրիջ էյչփի							
				Ресурс Ռեսուրս	**12500 страниц** 12500 էջ							
				Քարթրիջ CF361A ՍԻԷֆ361էյ								
				Производитель Արտադրող	**HP կամ համարժեքը** էյչՓի							
				Модель Մոդել	**CF361A (№508A) (голубой)** ՍԻԷֆ361էյ (№508էյ) (կապույտ)							
				Тип оборудования Սարքի տեսակը	**Голубой Картридж** Երկնագույն քարթրիջ							

Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրինակ քարթրիջ էյչփի
Ресурс Ռեսուրս	**5000 страниц** 5000 էջ
Քարթրիջ CF362A ՍԻԷֆ362Է	
Производитель Արտադրող	**HP** Էյչփի
Модель Մոդել	**CF362A (№508A) (желтый)** ՍԻԷֆ362Է (№508Է) (դեղին)
Тип оборудования Սարքի տեսակ	**Желтый Картридж** Դեղին քարթրիջ
Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրինակ քարթրիջ
Ресурс Ռեսուրս	**5000 страниц** 5000 էջ
Քարթրիջ CF363A ՍԻԷֆ363Է	
Производитель Արտադրող	**HP** Էյչփի
Модель Մոդել	**CF363A (№508A) (пурпурный)** ՍԻԷֆ363Է (№508Է) (կամիր)
Тип оборудования Սարքի տեսակը	**Пурпурный Картридж** Կարմիր քարթրիջ
Описание Նկարագրություն	**Оригинальный картридж hp** Բնօրինակ քարթրիջ էյչփի
Ресурс Ռեսուրս	**5000 страниц** 5000 էջ

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013010013	Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 02505983	ՀՎՀՀ 00861057
Ա.Կարապետյան	Կ. Սուքիասյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«14» 03 2018 թ. կնքված
ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6 - ծածկագրով պայմանագրի
30-18

ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Տնտեսագի-տական դասակար-գում	
5	30121500/339	Քարթրիջներ	5122	**Վճարումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ վճարման ժամանակացույցին համապատասխան**
6	30121500/340	Քարթրիջներ	5122	
7	30121500/341	Քարթրիջներ	5122	
9	30121500/337	Քարթրիջներ	5122	
11	30121500/334	Քարթրիջներ	5122	
12	30121500/335	Քարթրիջներ	5122	
13	30121500/330	Քարթրիջներ	5122	
Արտաբյուջե 900013010013 **Ընդամենը՝**				1995150

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Էվոկաբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1660000446270100
Հ/Հ 900013010013	ՀՎՀՀ 00861057
ՀՎՀՀ 02505983	
Ա.Կարապետյան	**Կ. Սուքիասյան**
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 3
«14» 03 20[illegible]թ. կնքված
ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6 – 30-18 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«14» 03 2018 թ. կնքված
ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6-30-18 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
14.03.2018թ. N ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6-30-18 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «06» 04 2018թ.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար **Ա. Կարապետյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և **«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն,** ի դեմս Ընկերության տնօրեն **տնօրեն Կ. Սուքիասյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր և հիմք ընդունելով **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության** և **«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**-ի միջև **14.03.2018թ**. կնքված թիվ **ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6-30-18** ծածկագրով պետական գնման պայմանագրի 3.2 և 8.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. 1.1 Կողմերը հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքի գնման և վճարման ժամանակացույցերը՝ համաձայն Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքը (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 1-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է **14.03.2018թ**. կնքված թիվ **ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/6-30-18** Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 9 էջից, կնքված են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	**«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**
ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	ք. Երևան, Վարդանանց 18/2
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Էվոկաբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1660000446270100
900013010013	ՀՎՀՀ 00861057
ՀՎՀՀ 02505983	
Ա.Կարապետյան	Կ. Սուքիասյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
<< 06 >> 05 2018 թ. կնքված
N 1 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ապրանքի											
հրավե-րով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախա-տեսված միջանցիկ ծածկա-գիրը՝ ըստ ԳՄԱ դասակար-գման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափ-ման միա-վորը	միավոր գինը/ << դրամ	Ընդհա նուր գինը/ << դրամ	ընդ-հանուր քանա-կը	մատակարարման		
									հաս-ցեն	Ենթա կա քանա կը	Ժամկետը**
5	30121500/339	Քարթրիջներ HP	Ճապոնիա Helwlett-Packard Europe B.V.	**HP 305A CE-411-A** օրիգինալ ստանդարտին համապատասխան, գույնը՝ կապույտ, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ:	հատ	60000	120000	2	Մ.Մկր-տչյան 5	2	3-րդ եռամսյակ
6	30121500/340	Քարթրիջներ HP	Ճապոնի Helwlett-Packard Europe B.V.ա	**HP 305A CE-412-A**, օրիգինալ, ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ դեղին, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ:	հատ	60000	120000	2	Մ.Մկր-տչյան 5	2	3-րդ եռամսյակ
7	30121500/341	Քարթրիջներ HP	Ճապոնիա Helwlett-Packard Europe B.V.	**HP 305A CE-413-A**, օրիգինալ ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ կարմիր, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ:	հատ	60000	120000	2	Մ.Մկր-տչյան 5	2	3-րդ եռամսյակ
9	30121500/337	Քարթրիջներ HP	Ճապոնիա Helwlett-Packard Europe B.V.	**HP LJ Pro MFP M227 sdn 30A** օրիգինալ ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ:	հատ	34998	174990	5	Մ.Մկր-տչյան 5	5	3-րդ եռամսյակ
11	30121500/334	Քարթրիջ-ներ HP	Ճապոն Helwlett-Packard Europe B.V. իա	**Քարթրիջ HP 80X (CF280X)** ԷյՋՓի 80էքս (ՍիէՖ280էքս) **Основные характеристики** Հիմնական բնութագրերը **Производитель** — **HP** ԷյՋՓի	հատ	83300	499800	6	Կառա-վարա-կան տուն 3	6	3-րդ եռամսյակ

				Արտադրող								
				Модель Մոդել	**CF280X (№80X) (экономичный)** ՍԻէՖ280էքս (№80էքս) (տնտեսող)							
				Тип оборудования Սարքի տեսակը	**Черный Картридж** Սև քարթրիջ							
				Описание Նկարագրությունը	**Оригинальный картридж HP** Բնօրինակ քարթրիջ էյչփի							
				Ресурс Ռեսուրս	6900 страниц 6900 էջ							
12	30121500/335	Քարթրիջ-ներ HP	Ճապոնիա Helwlett-Packard Europe B.V.	**Քարթրիջ CC530A (black), CC531A (cean), CC532A (yelow), CC533A(magenta)** ՍԻՍԻ530Էյ (սև), ՍԻՍԻ531Էյ (կապույտ), ՍԻՍԻ532Էյ (դեղին), ՍԻՍԻ533Էյ (կարմիր)		Լրա-կազմ	244980	489960	2	Կառա-վարա-կան տուն 3	2	3-րդ եռամսյակ
				Քարթրիջ CC530A ՍԻՍԻ530Էյ								
				Производитель Արտադրող	**HP** Էյչփի							
				Модель Մոդել	**CC530A (№304A)** ՍԻՍԻ530Էյ (№304 Էյ)							
				Тип оборудования Սարքի տեսակը	**Черный Картридж** Սև քարթրիջ							
				Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրնակ քարթրիջ էյչփի							
				Ресурс Ռեսուրս	**3500 страниц** 3500 էջ							
				Քարթրիջ CC531A ՍԻՍԻ531Էյ								
				Производитель Արտադրող	**HP** Էյչփի							

Модель Մոդել	**CC531A (№304A) (голубой)** ՍԻՍԻ531Է (№304 Է) (կապույտ)
Тип оборудования Սարքի տեսակը	**Голубой Картридж** Երկնագույն քարթրիջ
Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրնակ քարթրիջ էյչփի
Ресурс Ռեսուրս	**2800 страниц** 2800 էջ
Քարթրիջ CC532A ՍԻՍԻ532Է	
Производитель Արտադրող	**HP** Էյչփի
Модель Մոդել	**CC532A (№304A) (желтый)** ՍԻՍԻ532Է (№304 Է) (դեղին)
Тип оборудования Սարքի տեսակը	**Желтый Картридж** Դեղին քարթրիջ
Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրնակ քարթրիջ էյչփի
Ресурс Ռեսուրս	**2800 страниц** 2800 էջ
Քարթրիջ CC533A ՍԻՍԻ533Է	
Производитель Արտադրող	**HP** Էյչփի
Модель Մոդել	**CC533A (№304A) (пурпурный)** ՍԻՍԻ533Է (№304 Է) (կարմիր)
Тип оборудования	**Пурпурный Картридж**

				Սարքի տեսակը	Կարմիր քարթրիջ							
				Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրնակ քարթրիջ էյչփի							
				Ресурс Ռեսուրս	**2800 страниц** 2800 էջ							
13	30121500/330	Քարթրիջ-ներ HP	Ճապոնիա Helwlett-Packard Europe B.V.	**Քարթրիջ CF360X (black), CF361A (cean), CF362A (yelow), CF363A (magenta)** ՍԻԷֆ360էքս (սև), ՍԻԷֆ361էյ (կապույտ), ՍԻԷֆ362էյ (դեղին), ՍԻԷֆ363էյ (կարմիր)		Լրա-կազմ	470400	470400	1	Կառա-վարա-կան տուն 3	1	3-րդ եռամսյակ
				Քարթրիջ CF360X ՍԻԷֆ360Իքս								
				Производитель Արտադրող	**HP** էյչՓի							
				Модель Մոդել	**CF360X (№508X) (экономичный)** ՍԻԷֆ360 էքս (№305 էքս) (տնտեսող)							
				Тип оборудования Սարքի տեսակը	**Черный Картридж** Սև քարթրիջ							
				Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրնակ քարթրիջ էյչփի							
				Ресурс Ռեսուրս	**12500 страниц** 12500 էջ							
				Քարթրիջ CF361A ՍԻԷֆ361էյ								
				Производитель Արտադրող	**HP կամ համարժեքը** էյչՓի							
				Модель Մոդել	**CF361A (№508A) (голубой)** ՍԻԷֆ361էյ (№508էյ) (կապույտ)							
				Тип оборудования Սարքի տեսակը	**Голубой Картридж** Երկնագույն քարթրիջ							

					Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրինակ քարթրիջ էյչփի								
					Ресурс Ռեսուրս	**5000 страниц** 5000 էջ								
					Քարթրիջ CF362A ՍԻԷֆ362էյ									
					Производитель Արտադրող	**HP** էյչՓի								
					Модель Մոդել	**CF362A (№508A) (желтый)** ՍԻԷֆ362էյ (№508էյ) (դեղին)								
					Тип оборудования Սարքի տեսակ	**Желтый Картридж** Դեղին քարթրիջ								
					Описание Նկարագրություն	**Оригинальный картридж HP** Բնօրինակ քարթրիջ								
					Ресурс Ռեսուրս	**5000 страниц** 5000 էջ								

				Քարթրիջ CF363A ՍԻԷֆ363Է								
				Производитель Արտադրող	**HP** Էյչփի							
				Модель Մոդել	**CF363A (№508A) (пурпурный)** ՍԻԷֆ363Է (№508Է) (կամիր)							
				Тип оборудования Սարքի տեսակը	**Пурпурный Картридж** Կարմիր քարթրիջ							
				Описание Նկարագրություն	**Оригинальный картридж hp** Բնօրինակ քարթրիջ էյչփի							
				Ресурс Ռեսուրս	**5000 страниц** 5000 էջ							

ԳՆՈՐԴ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900013010013
ՀՎՀՀ 02505983

Ա.Կարապետյան
(ստորագրություն) Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057

Կ. Սուքիասյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
<<06>> 09 2018 թ. կնքված
N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Տնտեսագիտական դասակարգում	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել արտբյուջեից 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	30121500/339	Քարթրիջներ HP	5122	-	-	-	-	-	-	120000	120000	120000	120000	120000	120000	120000
6	30121500/340	Քարթրիջներ HP	5122	-	-	-	-	-	-	120000	120000	120000	120000	120000	120000	120000
7	30121500/341	Քարթրիջներ HP	5122	-	-	-	-	-	-	120000	120000	120000	120000	120000	120000	120000
9	30121500/337	Քարթրիջներ HP	5122	-	-	-	-	-	-	174990	174990	174990	174990	174990	174990	174990
11	30121500/334	Քարթրիջներ HP	5122	-	-	-	-	-	-	499800	499800	499800	499800	499800	499800	499800

12	30121500/335	Քարթրիջներ HP	5122	-	-	-	-	-	-	489960	489960	489960	489960	489960	489960	489960
13	30121500/330	Քարթրիջներ HP	5122	-	-	-	-	-	-	470400	470400	470400	470400	470400	470400	470400
Ընդամենը՝										1995150	1995150	1995150	1995150	1995150	1995150	1995150

ԳՆՈՐԴ
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
հ/հ 900013010013
ՀՎՀՀ 02505983

Ա.Կարապետյան
(ստորագրություն) Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ
հ/հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057

Կ. Սուքիասյան
(ստորագրություն) Կ.Տ.